

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ՔԵՂՈՒԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԹ ՀԱՅՐԵՎԵՑՔ.

ՊԱՏՃԵՆ.

Կ Ն Ի Ք



ԿՐՏԻՉ ՖԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՈՔՆ ԱՍՏՈՒԺՈՅ ԵԳԻՍԿՈՊՈՍԱՓԵՏ ԵՒ ԿՄԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՖԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԴԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱԹԻՋԵԼԱԿԱՆ ՄԱՅՈ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷջՄԻԱԾԻՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀՈԳԵԽՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷջՄԻԱԾԻՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՈՂԶՈՒՆԻՒ ԾԱՆՈՒՑԱՆԵՄՔ:

Ընկեւեալ զյայտարարութիւն տեսչի Ծեմարանիդ որ ի թ. 51. յ8 մայիսի 1899 ամի և հաւան գտեալ ընդ խորհուրդ տօնախմբելոյ գտարեգարձ քսան և հինգամեայ գոյութեան Ծեմարանի պատշաճաւոր և ընդարձակ համարատութեամբ ի գիտութիւն և ի միախմարութիւն համայն հօտին Հայաստանեայց պատուիրեամբ ընդ փոյթ կազմել զյանձնաժողով յուսուցաց անտի Ծեմարանի ընդ նախագահութեամբ Գերապատիւ Սուքիաս Արքեպիսկոպոսի առ ի հոգալ զհետեեալ նախագարաստութիւնն.

Ա. Ժողովիկ և կարգաւորել ըստ կարեւոյն զնիւթս պատմութեան Ծեմարանի յօրէ հիմնարկութեան նորին ցայսօր ժամանակի, քաղելով ի Դիւանաց անտի Մինօդի և Կաթուղիկոսարանի և յայլոց առանին և հասարակական յիշատակարանաց:

Բ. Յօրինել զընդարձակ տեղեկազիր զուսումնական վիճակէ Ծեմարանիս յընթացս քսան և հինգամեայ գոյութեան նորին:

Գ. Կազմել զպատկեր ծախուց ըստ ամենայն մասանց Ծեմարանի յընթացս քսան և հինգամաց, յատկապէս ածելով ի ստուգութիւն զծախս շինութեանց, զպահպանութեան որդեպաց, զքանակութիւն թոշակադրամոց և զայլոց պիտոյից Ծեմարանի:

Դ. Ածել ի ստուգութիւն զթիւ համօրէն աշակերտաց, որը ուսեալք են ի Ծեմարանի, որոշելով ի նոցանէ յականէ յանուանէ որոց կատարեալ է զընթացս լիակատար ուսմանց ի զպանոցական և մասնագիտական բաժանմուն անդ Ծեմարանի, և թէ ո՞ք ոմանք յատկապէս նուրիեալ են զանձինս ի կոչումն եկեղեցական և կամ ի պաշտօն ուսուցութեան ի հոգեոր զպրոցս մեր:

Ե. Յօրինել զցուցակ բարերարաց Ծեմարանի, զնուիրատուաց և զայլոց զրամական տրոց մտելոց ի գանձարան Մայր Աթոռոյ յանուան Ծեմարանի յընթացս քսան և հնգից ամաց, լուսարաննելով զչափ և զնպատակ մասնակցութեան բարեպաշտօն հասարակութեան Հայոց:

Այլ և պատուիրեամբ վարչութեան Ծեմարանի պատշաճաւոր հանդիսիւ սովորական տօնախմբութեան տարեգարձի Ծեմարանիս, որ յաւուր տօնի ո. Դէսրգայ զօրավարի յաւերժացուցանել զյատակ քսան և հինգամեայ գոյութեան բարձրագոյն հոգեոր կրթարանի մերոյ և ջան ի գործ արկանել խրախուսելոյ զամենայն պաշտօնեայս և զսանունս առ ի հրաւիրել

զազգայինս ի զործ ապագայ ապահովութեան ըեմարանի իւրաքանչիւրոցն լստ իւրում կարի զիտելով քաջ, զի պաշտօնելից եկեղեցոյ մեծապէս ունիմք պէտ նախապատրաստութեան թէ վասն ամենայն վիճակաց Հայոց և թէ նաև ի սպասաւ որութիւն վանօրէից և Հոգեոր գպրոցաց:

Մաղթեմք ի Ցեառնէ լինել զօրաւիզն վարչութեանդ և զործակցաց Նորին յամենայն ի ձեռնարկութիւնս ի բարւոքումն ապագայ վիճակի ծեմարանիս մերոյ և շնորհեմք ամենեցուն վաստակաւորաց զհայրապետականն մեր օրհնութիւն:

Շնորհեք Ցեառն Մերոյ թիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանսդ ամէն:

Ժ վերայ իսկականին ստորագրեալ է ՄԿԲՏՀ ԿԵԹՈՒԴԻԿՈՍ ԱՄԵՆԱԱՅՆ ՀԱՅՈՑ:

Թ. 579.

Ի 12 մայիսի 1899 ամէն և

Ըստ տոմարիս Հայոց Աթուլ.

Ի Հայրապետութեան Մերում Զ. ամէն
յԱյրաբատեան Մ. Աթուլ Ս. Էջմիածնի,

ի Վաղարշապատ.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՈՐԻՆՈՂԻԹԻՒՆՔ:

Կոնդակ յանուն կոնսիստորիային Շամախուոյ որով յայտ արարաւ կարգումն Բարեշնորհ Նիկողայոս Արեղայի Ա. Աւետիքեան ի վահահայր վանուցն Սաղիանի. թ. 509:

— Յանուն Գեր. Տ. թեմակալին Աստրախանի Ս. Արիստակէս Արքեպիսկոպոսի, որով տոււաւ նմա երկամսեայ արձակուրդ զնալ յօդեսաւ ի գիւտ առողջութեան անձին. թ. 524:

— Յանուն Ս. Սինօդի որով պատուիրեցաւ տալ արձակել ի Հարկաց զտիւացուն Հակոբաղ աւանի. թ. 528:

— Յանուն Ա. Սինօդի որով պատուիրեցաւ կարգադրել առ վիճակային ատեանս՝ առաքել զարդիւնս ուխտատեղեաց վիճակացն լստ առաջնոյն ի Սինօդն. թ. 529:

— Յանուն կոնսիստ. Նրեանի, որով կարդեցաւ Բարեշնորհ Սիօն վարդապետն ի փոխանորդ վիճակին Հին Նախիջեանի. թ. 536:

— Յանուն Ա. Սինօդի, յաղագս մատուցանելոյ առ Վեհ. Հայրապետն զցուցակս ծառայութեանց ոմանց միարանից Մ. Աթուլոյս. թ. 551:

— Յանուն Ս. սինօդի, որով պատուիրեցաւ առնել Հակոբութիւն ի վերայ նորոգութեան Սաղմոսավանից. թ. 552:

— Յանուն Ամեն, Պատրիարքին Կ. Պօլոց, որով պատուիրեցաւ տալ տեղեկութիւն

զդործոյ պսակալութութեան Մարիամուն Պատրիարքութեան Սեպատացուոյ. թ. 558:

— Յանուն վարչութեան Հոգ. Ծեմարանի Մ. Աթուլոյ, վասն քսան և հինգ ամեայ յորելենի նորին. թ. 579:

— Յանուն Ամեն. Պատրիարքին Կ. Պօլոց, որով պատուիրեցաւ տալ տեղեկութիւն զգործոց պսակալութութեանց Հացագործ Գաւրեղնի Պապիկեան և Տիկին Մարիամուն Պատրիարքութեան. թ. 602:

— Յանուն Գեր. Տ. փոխ. թեմակալին Երևանայ Ս. Ներսէս արքեպիսկոպոսի, որով պատուիրեցաւ արձակել ի պաշտամանէ վահահայրութեան զերկոսին վահահայրս Անոյ և Աղջոց վանից և առաքել ի Մ. Աթուլ պահահայր վարդապետն. թ. 607:

— Յանուն Ս. Սինօդի, որով պատուիրեցաւ տալ միանուագ երկու Հարբեր բուրդի Բարձր. Տ. Կիւրեղ վարդապետի, որպէս և զհնգամսեայ ոռօճիկ նորաւ առ ի գնալ նմա յամարանոց ի գիւտ առողջութեան անձին. թ. 611:

Արժանացեալք օրհնութեան եւ գոհունակութեան Վեհ. Հայրապետի:

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Փաշայի Նզգարեան Մեծ Հարաբիլիսեցոյ, յաղագս Հանից և զոհողութեանց նորաւ ի նորոգութիւն եկեղեցւոյ զեղչն իւրեանց. թ. 547:

— Օրհնութեան և գոհունակութեան յա-


նուն պ. Յովհաննիսի Խալափեան Շամախեց-
ւոյ՝ յաղագս բազմամեայ հաւատարիմ և ար-
դիւնաւէտ ծառ այութեան նորա յազգային և
եկեղեցական դորձու. թ. 581:

— Օրհնութեան և մահթարութեան
յանուն եղբարց Բուդակեանց ի Բագու, ի մա-
սին մահուան եղբօրն իւրեանց Մմբատաց.
թ. 585:

— Օրհնութեան և քաջալերութեան
յանուն պ. Պերճի Պռօշեան՝ առ յորելեան
քառասնամեայ գրական գործունէութեան
նորա և ուսուցչութեան. թ. 559:

Հայրապետական պարզեներ:

Երեանի Գեր. Փոխ. թեմակալ Ս. Մեր-
սէս արքեպիսկոպոսի միջնորդութեամբ Հայ-
րապետական Կոնդակաւ ստացան Քահանա-
յական լանջախաչեր Գեղարքունիաց Գաւառի
Վերին Ղարանլուխ զիւղի ծխատէր Նալբան-
գեան Գեորգ, Էջմիածնի զաւառի Թագալու-
զիւղի ծխատէր Վահան և Կոտայից զաւառի
գործակալ Քանաքեռ զիւղի ծխատէր Զա-
քարիա Քահանաները. թ. 512, 513, 608:



ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

ԿԵԱՆՔԸ.

Եւ կեանի յայտնեցամ, եւ ժեստ, եւ
վկայելի, եւ պատմիլի ձեզ զյատինեական
կենացն, որ իր առ Հօր եւ երեկոց մեզ: *

Ա. Ցոլի. Ա. 2:

ՅԱՏԵՐԸ եկեղեցին համարում են մի
հաստատութիւնն որ անմիջական
կազ չունի կեանքի հետ, որ խեղաթիւրում
կամ շահագործում է բնական, աշխարհային
կեանքը մի որոշ դասի՝ հոգեկորական, մասնա-

* Այս թեարանով խօսուի և Բագուի և Լուսաւ-
ուի եկեղեցում, և, կիւրակիմ.

որապէս կրօնաւորական, դասակարգի նա-
խապաշարու մներին համակերպելու կամ նորա
դասակարգային շահերին և եսական ցանկու-
թիւններին բաւականութիւն առլու համար:
Մխալ է թէ ուզիկ այդ կարծիքը՝ յամենայն
գեղս իրողութիւնն այն է, որ գոնէ մեր ժո-
ղովրդի մէջ եկեղեցին կորցրել է ըստ երեսու-
թիւն անմիջական առ ընչութիւնը կեանքի հետ,
այսօր ոչ միայն մեր կրթուածներն են պատա-
հարար կամ լոկ պաշտօնական յարարերու-
թեանց պատճառով եկեղեցի մտնում ենում
այլ նուև միջին գասակարգի, նաև հասարակ
ժողովրդեան մի ստուար մասի համար եկե-
ղեցին միայն պաշտօնապէս գոյութիւն ունի
և եթէ, լուագոյն գեղքում շատերը զեռ
նորա ծէսերին ու արարողութիւններին մաս-
նակցում են Հայրերից ժառանգութիւն ըն-
դունած պատկառանքով՝ քշերը կգտնուին,
որ պարզ հաշիւ տալ կարողանան, թէ ինչ
իրական գեր է կատարում նա իրենց խկա-
կան կեանքի, իրենց համար կենսական նշա-
նակութիւն ունեցող առօրեայ և յարատե-
խնդիրների մէջ: Եւ սակայն տեսնում ենք, որ
նոյն եկեղեցին քարոզում է աւետարանիչ տառա-
քեալի բերանով: Թէ բաւական չէ ինքը սերտ
կապ ունի կեանքի հետ, այլ և խկական կեան-
քը միայն իրան է յայտնուել՝ ինքը միայն
կարող է աշխարհի առաջ վկայութիւն դնել և
պատմել ու հաստատել՝ թէ ինչ է կեանքը,
ինչպէս և ինչի համար պէտք է ապրեն մարդիկ:
Սուտ է արդեօք այդ վկայութիւնը. տեսէք
ինչպիսի վատահութեամբ է խօսում առա-
քեալը. հեռու, հազար տարիներ առաջ կա-
տարուածի մասին չէ խօսում նա՝ չին աւան-
գութիւններով: ականջի լսածով, այլ իւր տե-
սածն ու զգացածն է պատմում: և ձեռք
մեր շօշափեցին ի վերայ բանին կենաց, ա-
սում է նա մի տաղ վերե. նա տեսել նա
շօշափել՝ նա իւր բոլոր եռթեամբ ըմբռնել
էր, որ մի կեանք կայ այս աշխարհից զուրս,
այս աշխարհից բարձր, մի նրկնաւոր Հօր մօտ,
որ այս աշխարհի կեանքի նման չէ անցաւոր,
ազել ու վշտալի, այլ յաւիտենական է, գե-
ղեցիկ և երանաւէտ, որ սակայն այս աշխար-
հի մէջ յայտնուել է, նորա մէջ իրակա-
նանալ ու երկիրը երկինք դարձնել, կամ նո-